«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ՀԱՅԿԱԿԱՆ ԶԻՆՈՒԺԸ 1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՌԱՐԿԱ	Հայոց պատմություն
ՀԵՂԻՆԱԿ	Սեդա Հարությունյան
ՄԱՐԶ	Արմավիր
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Արազափի Թ. **Հուրյանի անվան միջն. դպրոց**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1920 թ. Թուրքիան պատերազմական նախապատրաստություն էր տեսնում ՀՀ վրա հարձակվելու համար: Մ. Քեմալը հասկանում էր, որ Ռուսաստանը ևս ունի Անդրկովկասը նվաճելու ծրագիր, և ավելի իրական էր համարում Անդրկովկասի բաժանումը Թուրքիայի և Ռուսաստանի միջև: Մինչ Թուրքիան 1920 թ. սեպտեմբերից զավթում էր ՀՀ տարածքները, ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի Իրավարար վճռով ՀՀ-ին Արևմտյան Հայաստանից տրվելու էր 90 հազ. քառ. կմ տարածք: Ռուսաստանը իր առջև խնդիր էր դրել խորհրդայնացնել տարածաշրջանը և Թուրքիայի միջոցով խորհրդային կարգեր հաստատել նաև Արևելքի երկրներում: Թուրքիան տարածաշրջանում իր ծրագրերը փորձեց իրագործել նաև 2016 թ. ապրիլին՝ Արցախի դեմ Ադրբեջանի ձեռքով սանձազերծելով ռազմական գործողություններ, որոնք ձախողվեցին: Թուրքիայի համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին 2018 թ. ՀՀ-ում իշխանափոխությունից հետո, երբ հասարակությունը պառակտվել էր, պաշտոններում նշանակվում էին ոչ կոմպետենտ պաշտոնյաներ, տեղի էին ունենում բանակի բարձրագույն սպայակազմի բարոյազրկում, արտաքին քաղաքականության ձախողումներ: 2020 թ. Թուրքիայի զավթողական ծրագրերի համար նոր հնարավորություններ ստեղծեց «Covid-19» համավարակը, որի հետևանքով Հայաստանը հայտնվեց ամբողջական շրջափակման մեջ:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ կարող ենք փաստել, որ մեր հետազոտական թեմայի արդիականությունը, ինչպես նաև գործնական նշանակությունն ու կարևորությունը պայմանավորված է նրանով, որ մինչ օրս Թուրքիան չի հրաժարվել իր պանթուրքիզմի և պանօսմանիզմի ծրագիրն իրականացնելուց, որի իրականացման ճանապարհին հսկայական պատնեշի նման կանգնած է հայ ժողովուրդը: 44 օրյա պատերազմը, տարածաշրջանում Թուրքիայի ունեցած դերակատարումը և ներկա քաղաքական իրավիճակները վկայությունն են այն փաստի, որ հայ ժողովուրդը պետք է միշտ հիշի պատմության հերոսական դրվագները, գիտակցի իր հայրենիքի անկախության գինը և ոգեշնչվելով իր պատմության անմահ հերոսներով՝ միշտ պատրաստ լինի պահպանելու արյան գնով ժառանգություն ստացած իր մի բուռ հայրենիքը:

Թեմայի ընտրությունը կապված է 2021թ. Արցախյան 44-օրյա պատերազմի իրադարձություններով, հայերի պատմության այս ժամանակահատվածի հերոսական իրադարձությունների նկատմամբ ունեցած հետաքրքրությամբ՝ ցանկանալով մեկ

անգամ և՛ արժևորել եկեղեցի-պետություն համագործակցության արդյունքը՝ այն է հաղթական հայրենիք ստեղծելն ու պահպանելը: Ընդհանուր առմամբ Սարդարապատի հերոսամարտը հայ ժողովրդի ազատագրական պայքարի մեծագույն փայլատակումներից մեկն է, մի նոր ու հաղթական Ավարայր, որը հիմնովին կդրոշմվի պատմության մեջ և մշտապես սխրանքների կկոչի սերունդներին:

Հետազոտման նպատակը և խնդիրները:

Սույն հետազոտության նպատակն է թե ինչպես դասավանդենք «Հայկական զինուժը 1920 թ. Թուրք-հայկական պատերազմում թեմայի դասավանդումը դպրոցական դասախոսության մեթոդով» թեման դպրոցներում, առաջարկենք մեթոդներ, որոնք ավելի հետաքրքիր ու արդյունավետ կդարձնեն դասաժամը: Մեր խնդիրներն են ուսումնասիրել դպրոցական դասագրքերը, պարզել դրանց դրական և բացասական կողմերը, արդյունավետությունը, դասավանդման մեթոդները, քանզի, ցավոք սրտի, այսօրվա մեր դպրոցական դասագրքերը ունեն մի շարք խնդիրներ, որոնցից մեկը կապված է նյութի ծավալի հետ, պատմության դասագրքերում նյութի ծավալը շատ է, ինչը դժգոհություն է առաջացնում աշակերտների կողմից, ծավալի շատ լինելու պատճառով ձանձրանում են և հետաքրքրություն չեն ցուցաբերում պատմության նկատմամբ: Աշակերտը չի կարողանում հասկանալ, թե ինչպես աշխատի դասագրքի տեքստերի և փաստաթղթերի հետ, թե ինչպես առաջնային և երկրորդական տեղեկությունը ու փաստերը կարողանա միմյանցից տարբերել: Նշված նպատակի իրագործման համար սույն հետազոտության ընթացքում առաջադրվել և հետևողական լուծվել են ներքոշարադրյալ խնդիրները.

1. Քննարկման առարկա է դարձել Հայաստանը և ՀՀ զինված ուժերը 1920 թ. թուրք-հայկական պատերազմում. Առաջարկել ենք նոր մոտեցումներ «Հայկական զինուժում 1920 թ. թուրք- հայկական պատերազմում թեմայի դասավանդումը դպրոցական դասախոսության մեթոդով» թեմայի դասավանդման վերաբերյալ:

Մեթոդներ: Առաջադրված հինախնդիրների լուծման և վարկածների հաստատման համար հետազոտությունը հիմնականում իրականացվել է պատմական-շարադրական մեթոդով, որն իրենից ներկայացնում է երևույթների և իրադարձությունների վերարտադրում, դրանց ընթացքի հետազոտում՝ իրենց բնորոշ բոլոր հատկանիշներով ու առանձնահատկություններով հանդերձ: Մեթոդի հիմքում ընկած է պատմականության սկզբունքը: Արդիականացման մեթոդը նույնպես կիրառվել է, քանի որ սերտորեն կապված է համեմատական-համադրական մեթոդի հետ, համաձայն, որի ուսումնասիրելով ժամանակակից պատմական գործընթացները կարելի է դատել հեռավոր անցյալի նմանատիպ գործընթացների մասին: Ցանկացած հետազոտություն կարելի է համարել լիարժեք և գիտական այն

դեպքում, եթե դիտարկվում է նրա արդիականությունը պատմական հասարակական յուրաքանչյուր ժամանակահատվածում: Հետազոտությունը հնարավորություն տվեց հասկանալ և խոսել պատմական տեքստերի կարևորության մասին: Պատմական տեքստերը հիմք են հանդիսանում ուսուցչի համար' դասավանդման նյութեր ընտրելիս և մեթոդներ մշակելիս:

Տեքստերին առնչվելիս աշակերտները ընդլայնում են իրենց աշխարհայացքը, տեղեկատվական և մտավոր ունակությունները, որոնք նպաստում են ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս:

Հետազոտության առարկան և ժամանակագրական շրջանակը: Սույն հետազոտության առարկան է հանդիսանում Հայկական զինուժի ներկայացումը 1920 թ. Թուրք-հայկական պատերազմում, թեմայի դասավանդումը, դպրոցական դասախոսության մեթոդով թեմայով առաջադրված խնդիրների դասավանդումը դպրոցներում: Հետազոտության ժամանակագրական շրջանը ընդգրկում են 1918-1920 թթ Թուրք-հայկական պատերազմում ծավալված իրադարձությունները: Հետազոտության օբյեկտը հանրակրթական դպրոցում պատմության դասավանըման արդյունավետության բարձրացման գործընթացն է:

Թեմայի կառուցվածքը և բովանդակությունը: Թեման բաղկացած է ներածությունից, մեկ գլխից, որը բաղկացած է 1 ենթագլխից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների գրականության ցանկից:

Ներածության մեջ ամփոփ կերպով ներկայացված է թեմայի ընդհանուր բնութագիրը, թեմայի արդիականությունը, աղբյուրագիտական բազան և ուսումնասիրվածության աստիճանը, մեթոդաբանական հիմքը:

Թեմայի դասավանդման արդյունավետությունը հասկանալու և ամրապնդելու համար կարևոր է այնպիսի մեթոդական պլանի մշակում, որը հետաքրքրություն կա-ռաջացնի աշակերտների մոտ՝ դասին ամբողջովին ներգրավվելու համար:

Նախապես ուսումնասիրելով մեթոդական գրականություն, պետք է կազմել անհրաժեշտ պլան, որով պետք է հասնել առավելագույն արդյունքի:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ և ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ:

Ուսումնասիրության համար արժանահավատ են պարբերական մամուլում տեղ գտած մի շարք հոդվածներ, պատմաբանների աշխատություններ, որոնք մեծ տեղեկություն են պարունակում Հայաստանը և ՀՀ զինված ուժերը 1920 թ. Թուրք-հայկական պատերազմում թեման պատմաքննության ենթարկելու տեսանկյունից:

Թերևս այդ տեսանկյունից կարևոր նշանակություն ունի Վ. Հ. Վիրաբյանի[1] թեմային վերաբերվող հոդվածները, ձեռնարկներն ու մի շարք աշխատությունները: Միանգամայն արժեքավոր է Է. Ա. Զոհրաբյանի աշխատությունը[2], որում ամբողջական ներկայացված են թեմային վերաբերող հարցադրումները և խնդիրները, չնայած հեղինակը նպատակ չի դրել միայն զինուժը ներկայացնելը: : Թեմայի արժևորման և ամբողջացման առումով դիտարկելի է նաև Ռ. Սաֆրաստյանի աշխատանքը: Ուշագրավ է Լ. Խուրշուդյանի արժեքավոր ուսումնասիրությունը , Կ. Հարությունյանի, Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն աշխատությունները: Այս նյութերը մեծապես օգտակար են եղել մեր աշխատանքը շարադրելիս:

Պակաս արժեքավոր չեն ժամանակակիցների վավերագրությունները: Այս տեսակետից նախ պետք է առանձնացնել Հայաստանի Առաջին հանրապետության գործիչների հուշագրություններն ու վկայությունները: Անձամբ լինելով դեպքերի ոչ միայն ժամանակակիցը, այլև անմիջական ականատեսն ու մասնակիցը՝ Սփյուռքում հաստատված այս գործիչներն անսպառ տեղեկություններ են հաղորդում մեզ: Այս տեսակետից արժանահիշատակ են Սիմոն Վրացյանի , Ալեքսանդր Խատիսյանի , Հովհաննես Քաջազնունու , Ռուբեն Տեր-Մինասյանի , Ավետիս Ահարոնյանի , Կարո Սասունու , Վահան Նավասարդյանի , Միքայել Վարանդյանի , Ռուբեն Դարբինյանի, Գարեգին Նժդեհի, Արտաշես Աբեղյանի, Համբարձում Տերտերյանի, Վահան Փափազյանի (Կոմս), Վարդան Գևորգյանի, Հայկ Ասատրյանի, Սարգիս Արամյանի, Օնիկ Մխիթարյանի, Նորայր Բադալյանի, Գևորգ Երեցյանի և այլոց վկայությունները: Պակաս արժեքավոր չեն նաև ռամկավար գործիչների վկայությունները, որոնց թվում հիշատակելի են Արտակ Դարբինյանի, Արշակ Չոպանյանի, Հրաչ Երվանդի, Հովհաննես Պողոսյանի և այլոց գրվածքները:

Ժամանակակիցների թողած ոչ մեծաթիվ, բայց հետաքրքիր վավերագրեր կան նաև Հայաստանի ազգային արխիվի ֆոնդում:

---

[1] Վիրաբյան Վ., Ա. Եփրիկյան, Ս.Պողոսյան , Հայկական զինուժը 1914-1920 թթ., Երևան, 2020, 606 էջ:Վիրաբյան Վ.,ՀՀ պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը, Երևան, ԵՊՀ հրատ., 2006 թ., 288 էջ:

[2] Զոհրաբյան Է. Ա., 1920 թ. Թուրք – հայկական պատերազմը և տերությունները, Ոսկան Երևանցի, 1997,366 էջ:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԻՆՈՒԺԸ 1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գիտության և տեխնիկայի աննախընթաց զարգացումն այսօր կրթության առջև դնում է նոր պահանջներ ու մարտահրավերներ: Կրթական համակարգում տեղի ունեցող բարեփոխումները իրենց հերթին ենթադրում են նոր մոտեցումների կիրա- ռում պատմության դասավանդման ընթացքում: Պատմության դասավանդման գլխա- վոր նպատակն է սովորողների մեջ ազգային ինքնագիտակցության ձևավորումը, պատմական անցյալի հետ ծանոթացումը, անցյալի փորձի հիման վրա՝ ներկայի ճիշտ ուղու կառուցումը, ժամանակակից աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների ճիշտ գնահատումը, զարգացած աշխարհայացք ունեցող անհատի դաստիրակումը, որը օժտված կլինի հայրենասիրությամբ, համամարդակային արժեքներով:

Ուսուցումը երկկողմանի գործընթաց է ուսուցչի և սովորողների միջև: Այն առա- վել արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է կիրառել տարբեր մեթոդներ և հնարներ՝ հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները, ընկալման մակարդակը: Մեթոդը հունարեն բառ է (metodos), որը բառացի թարգմա- նած նշանակում է ինչ-որ տեղ տանող ուղի, ճանապարհ: Մեթոդի ընտրությունը կախված է ուսուցման նպատակներից, խնդիրներից, նյութի քանակի և բարդության աստիճանից, դասարանում սովորողների թվաքանակից, ուսուցիչ-աշակերտ փոխ- հարաբերություններից և այլն: Առհասարակ դասի ընթացքում մեթոդի կիրառման գլխավոր խնդիրն է նախապես կազմված ուսուցման նպատակների իրականացումը: Մեթոդների բազմազանության մեջ դասանյութին համապատասխան մեթոդի ընտ- րությունը և կիրառումը նպաստում է սովորողների մոտ կարողությունների և հմտու- թյունների զարգացմանը:

Ստորև կներկայացնենք թեմայի դասավանդումը դպրոցական դասախոսության դասատիպով: Քանի որ, թեման բավական ծավալուն է և տվյալ պատմական ժամա- նակաշրջանը նշանակալից ու շրջադարձային հայ ժողովրդի կյանքում, ուստի անհրա- ժեշտ է այն ներկայացնել սովորողներին առավել մանրամասն և հաղորդել շատ գի- տելիքներ:

Մինչ այդ, պարզաբանենք, թե ի՞նչ է իրենից ներկայացնում դասախոսությունը:

Դասախոսությունը խոսքային մեթոդներից է, որն առաջացել է լատիներեն lectio բառից, որը նշանակում է ընթերցել, դասախոսել: Նրա առանձնահատկություններից մեկն այն է, որ կիրառվում է բարձր դասարաններում առավել ծավալուն՝ բարդ նյութերի ուսումնասիրության ժամանակ:

Դպրոցական դասախոսությանը նպատակն է զարգացնել սովորողների մոտ լսելու հմտությունները, վերլուծելու, գլխավորը դուրս բերելու, համառոտագրելու ընդունակությունները[3]:

Դասախոսությունը նպաստում է սովորողների կողմից ուսումնական նյութի ամբողջական ընկալմանը, առավել խորքային ուսումնասիրությանը, ստեղծագործական, քննադատական մտածողության զարգացմանը, սեփական մտքերի, հայացքների ձևավորմանը:

Թեմայի ուսումնասիրման սկզբում դասախոսության նպատակն է ներկայացնել ուսումնասիրվող տվյալ ժամանակաշրջանի հիմնական խնդիրների ամբողջական բնութագիրը: Դասի այս տեսակը մեծ աշխատանք է պահանջում ուսուցչից: Նա պետք է հետևողականորեն պետք է ընտրի նյութը դասախոսության համար՝ ելնելով թեմայի ամբողջական բնութագրման տրամաբանությունից[4]:

Դպրոցական դասախոսությունը հանդիսանում է դասը վարելու ավանդական դասատիպերից մեկը. չնայած դրան՝ այն այսօր էլ չի կորցրել իր արդիականությունը: Այն կիրառվում է խոսքի միջոցով, որն իր հերթին նպաստում է սովորողների երևա- կայության, հիշողության, մտային կարողությունների զարգացմանը: Դպրոցական դասախոսությունը ունի մի շարք պահանջներ՝ պետք է լինի գիտական, սովորեցնի մտածել, կատարել վերլուծություններ, եզրակացություններ, դասագրքի շրջանակնե- րից դուրս ծանոթանալ որևէ այլ թեմայի հետ: Դասախոսությունը առավել արդյու- նավետ դարձնելու համար զուգահեռաբար կարելի է կիրառել նաև զրույցի, հարց ու պատասխանի, նկարների, քարտեզների վրա աշխատելու մեթոդները և հնարները:

Պետական ու ազգային խնդիրներ են համարվում միջազգային ասպարեզում ՀՀ կրթական համակարգի մրցունակության ապահովումը, դասավանդման նոր մեթոդների և տեխնոլոգիաների կիրառումը: Պատմության դասավանդման մեթոդները պատմության դասագործընթացում սովորողի և դասավանդողի միջև իրականացվող փոխներգործության այն ձևերն են, որոնք հնարավորություն են ընձեռում խթանելու գիտելիքների ձեռքբերումը, իմաստավորելու դրանք, զարգացնելու սովորողների կարողությունները և հմտությունները, զարգացնելու նրանց ընդունակությունները: Ուստի կիրառվող ամեն մի մեթոդ ունի իր նպատակն

[3] Պապոյան Հ., Պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում, Երևան, 2013, էջ 238

[4] Նույն տեղում էջ 239:

ու բովանդակությունը և իրականացման միջոցները: Դասավանդման և ուսուցման մեթոդները բազմազան են' կախված դասավանդվող առարկայի առանձնահատկությունից, դասանպատակից ու բնույթից.նրանք միաժամանակ և նախադրյալ են, և նյութ, գործիք, և ուսումնասիրության արդյունք: Պատմության դասավանդման ամենատարածված ակտիվ մեթոդներն են.

- աշխատանք դասագրքով, օժանդակ ձեռնարկներով, սկզբնաղբյուրներով' պատմողական-նկարագրական, բացատրական-վերլուծական, զրույց-բանավեճ-հիմնավորում, համառոտագրում, հուշագրում, ժամանակագրական հերթագայում,
- դասի մոդելավորում և նախագծում' քարտեզագրում, գծապատկերում, աղյուսակներով աշխատանք, թեստավորում,
- Մեդիա կրթական-ցուցադրական' սահիկահանդես (power point presentation), տեսաձայնային մեդիա արտադրանք, փաստավավերագրական կամ գեղարվեստական պատմական ֆիլմերի դիտում և քննարկում, առցանց թանգարանների, պատմական հուշարձանների և կոթողների այցելություն, պատմավեպերի ընթերցում և այլն,
- գործնական, ինքնուրույն և խմբային աշխատանքներ,
- իրադրային-իրավիճակային'
  - խաղային-ուսուցողական քեյսեր,
  - ցուցադրական-խաղարկային քեյսեր,
  - խնդրահարույց-դաստիարակչական քեյսեր:

Յուրաքանչյուր մասնակից պետք է զգա, որ իր արտահայտած միտքն արժանի է ուշադրության: Սա մտքեր արտահայտելու շահագրգռվածության պայման է: Մտքերի տարափը հերթականություն կամ չափի սահմանում չի ենթադրում: Սակայն պետք է
հետևել, որ մտքեր արտահայտելու հարցում որևէ գերակայություն չստեղծվի:

«Հայ ժողովրդի պատմություն» դասընթացի նորագույն շրջանի 9-րդ դասարանի ուսումնական պլանում ընդգրկված «1920 թ. հայ-թուրքական պատերազմը: ՀՀ անկումը» թեման ուսուցանելու համար պետական պլանավորմամբ տրամադրվում է 1 դասաժամ: Քանի որ թեման բավականին ընդգրկուն է, ուսուցիչը պետք է ուշադրություն դարձնի առավել կարևորագույն հարցերին, որպեսզի կարողանա հնարավորինս մատչելի դրանք մատուցել աշակերտներին: Այս նպատակով ուսուցիչը, բացի ուսուցչի ձեռնարկից, նախօրոք ուսումնասիրում է տարբեր հեղինակների աշխատությունները :

Թեման ուսուցանելուց առաջ պետք է վերհիշել Հայաստանի առաջին Հանրապետության կազմավորումը, այն դժվարին ճանապարհը, որ նա անցավ իր պետականության վերականգնման համար: Հայ ժողովուրդը իր հազարամյակների պատմության ընթացքում ինքնությունը պահպանելու համար հարկադրված է եղել ընդդիմանալ արևմուտքից և արևելքից իրեն շրջապատող հզոր տերությունների հարձակումներին: Փոխվել են աշխարհակալ տերությունները, բայց անփոփոխ են մնացել Հայաստանը գրավելու, իրենց միաձուլելու նրանց ձգտումները: Անհավասար այդ պայքարում հայ ժողովուրդը թեպետ հաճախ զրկվել է անկախ պետականությունից, բայց պահպանել է իր ազգային նկարագիրը: Կորցրել է պետականությունը, սակայն երբեք չի համակերպվել այդ վիճակին, մշտապես մաքառել է պետականությունը վերականգնելու համար: Եվ հատկանշական է, որ մեր պատմության նորագույն շրջանը դարձավ հայկական պետականության դարաշրջան: Ուսուցիչն ավելացնում է, որ չնայած Սարդարապատի հերոսամարտով կյանքի կոչվեց Հայաստանի առաջին Հանրապետությունը, սակայն նա, ցավոք սրտի, ծանր ժառանգություն էր ստացել: Առաջին աշխարհամարտի տարիներին կազմալուծվել, քայքայվել էր տնտեսությունը, երկիրը լցվել էր ցեղասպանությունից մազապուրծ հազարավոր գաղթականներով, շարունակվում էին ճնշումները Ռուսաստանի և Թուրքիայի կողմից: Անկախություն ձեռք բերած հանրապետությունը փորձեց վերականգնել երկրի տնտեսությունը, մշակույթը, կարգավորել միջազգային հարաբերությունները, սակայն չհասցրեց մեծ բարեփոխումներ կատարել, քանի որ 1920 թվականի թուրք-հայկական պատերազմը արագացրեց Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը: Համոզվելով, որ աշակերտները ներկայացվածը ընկալել են ամբողջությամբ, ուսուցիչը շարունակում է՝ նշելով, որ հայ-թուրքական պատերազմը պատճառ հանդիսացավ Հայաստանի տարածքային կորուստների, Ալեքսանդրապոլի պայմանագրի, Երևանի հայ-ռուսական բանակցությունների և 1920 թվականի դեկտեմբերի 2-ի համաձայնագրի: Նշում է, որ այս պատերազմը ճակատագրական եղավ հայ ժողովրդի համար: Վերջինս կորցրեց հերոսական պայքարի արդյունքում ձեռք բերված անկախությունը: Կարևորում է այն, որ այս պարագայում Հայաստանը չուներ այլընտրանք և կողմնորոշվեց դեպի խորհրդային կարգերը: Դասի ընթացքում ուշադրություն է դարձվում հետևյալ կետերին .

1. Հիմնական հարցեր - 1920 թվականի թուրք-հայկական պատերազմը - Ալեքսանդրապոլի պայմանագիրը - Երևանի հայ-ռուսական բանակցությունները և 1920 թվականի դեկտեմբերի 2-ի համաձայնագիրը
2. Նպատակը և խնդիրները ա. Կրթական իմանա. - թուրք-հայկական պատերազմի, Ալեքսանդրապոլի պայմանագրի, Հայաստանի

խորհրդայնացման մասին, պատմական կարևոր տարեթվերը՝ 1920 թվականի սեպտեմբերի 23, 1920 թվականի հոկտեմբերի 30, 1920 թվականի դեկտեմբերի 2, 1920 թվականի դեկտեմբերի 2, լույս 3-ի գիշեր, պատմաաշ-խարհագրական և պատմական գործիչների անունները՝ Կարս, Ալեքսանդրապոլ, Սուրմալու, Սիմոն Վրացյան, Քյազիմ Կարաբեքիր, Ալեքսանդր Խատիսյան: կարողանա. կարողանա. - բացահայտել թուրք-հայկական պատերազմի պատճառները, վերլուծել Ալեքսանդրապոլի պայմանագիրը, գնահատել հայ ժողովրդի որոշումը՝ կողմնորոշում դեպի խորհրդային կարգերը բ. Դաստիարակչական - գիտակցել հայ ժողովրդի պայքարի դերն ու նշանակությունը, արթնացնել հայրենասիրական զգացմունքներ, ատելություն սերմանել բռնության ցանկացած դրսևորման, կրոնական ու ազգային ճնշումների ու հալածանքների նկատմամբ,գնահատել և արժևորել 1920 թվականի դեկտեմբերի 2-ի որոշումը՝ Հայաստանում խորհրդային կարգերի ընդունման մասին: գ. Զարգացնող - զարգացնել սովորողների մտածողությունը, ընդլայնել նրանց մտահորիզոնը, հարցերի միջոցով կենտրոնացնել նրանց ուշադրությունը, նպաստել նրանց մտքի, կամքի, վճռականության և համառության զարգացմանը:

3. Հիմնական հասկացություններ և առանցքային գաղափարներ «դաշնակից» երկրներ, կոալիցիոն կառավարություն, 11-րդ Կարմիր բանակ, խորհրդային կարգեր, ՀՍԽՀ, Հայհեղկոմ
4. Ուսումնադիտողական պարագաներ Դասագիրք, պատմության տետր, քարտեզ՝ՀՀ-ն ըստ Ալեքսանդրապոլի պայմանագրի (1920թ.), հատվածներ ՌԽՖՍՀ և ՀՀ համաձայնագրից (1920 թ. դեկտեմբերի 2)
5. Ներառարկայական և միջառարկայական կապեր (ներառարկայական կապերը նպաստում են նույն դասընթացի շրջանակներում սովորողների գիտելիքների ամրապնդմանը, իսկ միջառարկայական կապերը օգնում են տարբեր դասընթացների միջև նմանություններն ու տարբերությունները բացահայտելուն, մասնավորապես՝ օգնում են տեսնել հայոց պատմության և համաշխարհային պատմության առնչությունները): Հայոց պատմություն <<Հայաստանի Հանրապետության անկումը>> (9-րդ դասարան), Նորագույն պատմություն , <<Հայ -ռուսական հարաբերությունները: Հայաստանի Հանրապետության անկումը >> (9-րդ դասարան), Հայոց պատմություն <<Հայաստանի առաջին հանրապետությունը>> (11 -րդ դասարան):
6. Դասատիպեր Նոր նյութի ուսումնասիրում, դասախոսություն, գործնական պարապմունք

7. Ուսուցման մեթոդներ, հնարներ: Աշխատանք սկզբնաղբյուրի հետ, մտագրոհ, աղյուսակ, ինքնուրույն աշխատանք
8. Դասի ընթացքը: Դասն սկսվում է թուրք-հայկական պատերազմի մասին ուսուցչի ներածական զրույցով, որի ընթացքում աշակերտները հետևում են ուսուցչին և փորձում առանձնացնել նրա խոսքում շեշտված կարևոր մտքերը: Այնուհետև, անցկացվում է մտքերի համադասարանական գեներացիա՝ մտագրոհ, «մտքերի տարափ» թուրք-հայկական պատերազմ գաղափարի շուրջ:



Սլաքների մոտ գրառվում են հայ-թուրքական պատերազմին վերաբերվող աշակերտների կողմից արտաբերված բոլոր բառերը, թվերն ու արտահայտությունները (1920թ., կարմիր բանակ, քեմալական շարժում, դեկտեմբերի 2, լույս 3-ի գիշեր և այլն): Ուսուցիչը հնարավորություն է տալիս արտահայտվելու բոլոր ցանկացողներին: Եթե որևէ մեկը դժվարանում է մտքերը հստակ արտահայտել, ուսուցիչը կարող է օգնող հարցեր տալ (որո՞նք էին հայ-թուրքական պատերազմի պատճառները, ի՞նչ հետևանք այն ունեցավ Հայաստանի համար, ի՞նչ տարածքներ կորցրեց Հայաստանը պատերազմի ընքացքում և այլն), հուշել անհրաժեշտ բառը կամ բառերը: Այնուհետև կատարվում է գրառված բառերի, արտահայտությունների խմբավորում և մտքերի փոխանակում, որից հետո դասարանը բաժանվում է 4-5 խմբի, և աշխատանքը շարունակվում է համագործակցային փոքր խմբերով: Խմբերն ընթերցանության միջոցով ծանոթանում են «Ալեքսանդրապոլի պայմանագիրը, 1920 թվականի դեկտեմբերի 2-ի հայ-ռուսական համաձայնագիրը» հարցի բովանդակությանը, առանձնացնում կարևոր մտքերն ու գաղափարները, կազմակերպում քննարկում: Յուրաքանչյուր խումբ արտահայտում է իր կարծիքը թուրք-հայկական պատերազմ տվյալ հարցի շուրջ, կատարվում է մտքերի փոխանակում: Խմբային քննարկումից հետո ուսուցիչը ամփոփում է կատարած աշխատանքը: Ամփոփումը կատարվում է հարցերի և «Բաթումի և Ալեքսանդրապոլի պայմանագրերը» համեմատական աղյուսակի միջոցով:

Համեմատության հարցեր	Բաթումի պայմանագիրը	Ալեքսանդրապոլի պայմանագիրը
Տարեթիվը		
Տարածքները, սահմանները		
Զորքը		
Արձագանքներ		

Այս աշխատանքից հետո կատարվում է գնահատում: 9. Տնային առաջադրանք Լրացնել Т-աձև աղյուսակ՝ նշելով Ալեքսանդրապոլի պայմանագրի դրական և բացասական կողմերը:

դրական	բացասական

Այսպիսով, «1920 թ. հայ-քուրքական պատերազմը: ՀՀ անկումը» թեման ուսուցանելիս պետք է առավել կարևորել հայ-թուրքական պատերազմի պատճառները, Հայաստանի տարածքային կորուստները, 1920թ. Հայաստանի խորհրդայնացումը, Ալեքսանդրապոլի պայմանագրի նշանակությունը Հայաստանի կյանքում և այլ հարցեր, ուսուցանել Առաջին հանրապետության, հայ ժողովրդի պատմության մեջ նրա ունեցած տեղի ու դերի և կործանման իրական պատճառների մասին:

Եզրակացություն

Հայկական զինուժը 1918-1920 թթ. անցել է ձևավորման ու կայացման դժվարին ուղի՝ փորձելով հաղթահարել մի շարք խնդիրներ:

Հայաստանի անկախության հաստատման պահին հայկական զորքը կազմված էր առանձին Հայկական կորպուսից և կորպուսի իրավունքներ ունեցող Հատուկ ջոկատից: Ինչպես կորպուսը, այնպես էլ ջոկատը Անդրկովկասի փլուզմամբ դուրս եկան Կովկասյան բանակի հրամանատարության ենթակայությունից և դարձան ինքնուրույն միավորներ, ընդ որում կառավարության դեր կատարող Ազգային ժողովի համաձայնությամբ ղեկավարությունն անցավ կորպոսի հրամանատարին:

Հայոց անկախ պետականության կայացման ամենազորեղ օղակներից մեկն անկասկած ազգային բանակն էր և հնարավորի դեպքում՝ հաշվարկված արտաքին քաղաքականությունը, որը միշտ չէ, որ արդարացված էր: Հանրապետության ղեկավարությունը և հասարակական-քաղաքական շրջանակները քաջ գիտակցում էին Հայաստանի աշխարհաքաղաքական բարդ իրավիճակը: Ոչ բարեկամ հարևանների առկայությունը՝ մի կողմից, տարածաշրջանը մեծ տերությունների հետաքրքրությունների ու շահերի բախման օբյեկտ լինելը՝ մյուս կողմից, և դրան գումարած հուսալի դաշնակիցների բացակայությունը ինքնըստինքյան հուշում էին, որ նորանկախ Հայաստանի պետական ու ազգային անվտանգության միակ հուսալի երաշխիք կարող էր լինել սեփական լավ պատրաստված, կարգապահ ու մարտունակ ազգային բանակը:

Հայաստանն այդ պատերազմը տանուլ էր տվել դեռ մինչև նրա սկսվելը, տանուլ էր տվել դիվանագիտական հողի վրա:

Սկսվեց պատերազմը, և իսկույն պարզ դարձավ, որ Հայաստանը միայնակ է, չունի բարեկամ, չունի դաշնակից: Նա փակօղակված էր երեք կողմից մահմեդական ծով ալիքով: Իսկ Հյուսիսում Վրաստանն էր, որը ոչ միայն օգնության չհասավ,այլև գերադատեց օգավել Հայաստանի նեղ դրությունից՝ տարածքային նվաճումներ կատարելու համար:

Դպրոցներում շատ կարևոր է, որպեսզի հնարավորինս չափ մատչելի ու հասկանալի անցնեն թեման, կարևոր է, որպեսզի կարողանանք սովորողների մոտ առաջացած հարցերին տալ հստակ պատասխան[5]:

Սովորողները գիտակցեն ու հասկանան տվյալ հարցի կարևորությունը ու նշա-

[5] Պապոյան Հ., Պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում, Երևան, 2013, էջ 238

նակությունը: Ուսումնասիրելով դպրոցական դասագրքերը ցավոք սրտի պետք է, նշենք, որ թեման այնքան էլ ճիշտ չէ ներկայացված: Կան մի շարք թերություններ, որոնց մասին մենք արդեն անրադարձել ենք: Սովորողներին ոչ միայն պետք է տալ պատմական գիտելիքներ, այլև նրանց մոտ ձևավորել պատմական երևույթները ճիշտ հասկանալու ու մեկնաբանելու կարողություն: Թույլ տալ, որպեսզի նրանք ազատ մտածեն, և հասկանան դասավանդվող թեման: Սովորեցնել, որ պետք է դուրս գալ զոհի կերպարից, զոհի կերպար ընդունելով՝ ոչ ոք մեզ չի լսի և հարցերին լուծում չի տրվի:

Այլևս երբեք պետք չէ ակնկալել օտար տերություններից օգնություն, քանի որ մեր
պատմությունը բազմիցս ապացուցել է, որ մենք տուժել ենք հենց այդ ակնկալումից:

Պետք է մեր խնդիրների լուծումները փնտրենք մեր մեջ և հույս չդնենք ոչ մի պետության վրա, ունենանք ազգային շահ հասկացություն, մտածենք ամեն ինչ անել, որպեսզի մեր հայրենիքը միայն շահի մեր գործունեությունից: Դառնանք ոչ թե են-թարկվող ազգ, այլ՝ ենթարկող:

Ինչպես արդեն նշել ենք, պետք չէ դպրոցական դասագրքերում թեմանանցնելիս միայն ծավալին ուշադրություն դարձնել, այլ ոչ՝ բովանդակությանը:

Շատ կարևորը է, որպեսզի դասավանդման մեթոդներին նույնպես ուշադրություն դարձվի: Եվ ավեի շատ կիրառվի ինտերակտիվ մեթոդներ, որոնց շնորհի սովորողը ավելի ակտիվ կդառնա: Դասընթացի ընթացքում, սովորողներին հնարավորություն տալ օգտվել գիտական գրականությունից, բացի դասագրքում տրված բուն նյութից, պահանջել համապատասխան տեղեկություն ձեռք բերել տվյալ թեմայի շրջանակներում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Եփրիկյան Ա. ,Պատմության դասավանդման արդի մեթոդներ և տեխնոլոգիաներ,Երևան,ՎՄՎ-Պրինտ,2021. 336 էջ:
2. Զոհրաբյան Է. Ա., 1920 թ. Թուրք - հայկական պատերազմը և տերությունները,Ոսկան Երևանցի, 1997,366 էջ:
3. Վիրաբյան Վ. և ուրիշ. , Հայկական զինուժը 1914-1918 թթ. , Լուսակն հրատարակչություն, Երևան, 2020, էջ 231:
4. Վիրաբյան Վ. , Ա. Եփրիկյան, Ս. Պողոսյան Հայկական զինուժը 1914-1920 թթ.,Երևան, 2020, 606 էջ:
5. Վիրաբյան Վ.,ՀՀ պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը, Երևան, ԵՊՀ հրատ., 2006 թ., 288 էջ:
6. Վիրաբյան Վ., Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները 1918-1921 թթ., մենագրություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2016. - 842 էջ :
7. Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ձևավորումը և գործունեությունը 1918 - 1920 թթ.,Հետախուզություն, բանակ և ՆԳՆ, Մենագրություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2015, 746 էջ:
8. Վիրաբյան Վ., Հայաստանի հանրապետությունը 1918-1920 թթ., Ուսումնական ձեռնարկ բուհերի համար: ԵՊՀ հրատ., Երևան, 2011 թ., 204 էջ:
9. Վիրաբյան Վ., Հայոց պատմություն, Ուսումնական ձեռնարկ, Ճարտարագետ հրատ., Երևան,2013, 160 էջ:
10. Վիրաբյան Վ. ,Հայոց պատմության հիմնահարցերի շուրջ /աշխատություն/ - Երևան, «Լուսակն» հրատ., 2007թ., 100 էջ:
11. Վիրաբյան Վ., Հայկական հետախուզությունը Առաջին հանրապետության տարիներին

Ռուսերեն

1. Азатян Г. Г.. Судьбоносные договора. Ереван, 2000; Р. Казанджян. К вопросу об оценке Московского русско-турецкого договора 1921 г.-

Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XX, Երևան, 2001,

¯Правда Армении‖, 6. XI. 1998; 14. XI. 1998; ¯Голос Армении‖, 26. IV. 2001

2. Берелковский И. В., Павлов Л.С., Методика преподавания истории в школе,М., 2001, 336 էջ:
3. Борьян Б. А.. Армения, международная дипломатия и СССР. Ч. II, М.—Л., 1929,
4. Вяземский Е. Е., Стрелова О.Ю., Методика преподавания истории в школе,М., 2001, 180 էջ:
5. Геноцид армян: ответственность Турции. .., т. 2, ч. I том,878, 883, с. 220,
6. НКАО ССР, 1918-1925, документы материалы, Баку, 1999, с. 42.

Պարբերականներ

1. ՀԱԱ, ֆ ,«Մշակ», 1 հոկտեմբերի, Թիֆլիս, 1920 թ.:
2. ՀԱԱ, ֆ ,Մշակ, 5 նոյեմբերի, 1920 թ.:
3. ՀԱԱ, ֆ. «Ժողովուրդ» (Երևան), 15 նոյեմբերի, 1918, N 32:
4. ՀԱԱ, ֆ, «Մշակ», 16 սեպտեմբերի, 1920 թ.
5. ՀԱԱ , ֆ .Մշակ , 17 հուլիսի, 1920 թ.:
6. «Ուրբաթ» (շաբաթաթերթ), Ե., 25. 05. 1990, ՀԱԱ, ֆ. 199, g. 1, գ. 27, թ. 128:
7. ՀԱԱ, ֆ. «Զանգ», Երևան, 20 փետրվար